

ԱՄՓՈՓԱԳԻՐ

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ» ԿԱՅՔՈՒՄ ՆԿԱՏՎԱԾ ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ

Կայքում նկատվող լեզվական սխալները հազվադեպ չեն: Հանդիպում են ամեն փեսակի անճշտություններ:

Ամփոփագիրը կազմելիս, ինչպես միշտ, վրիպակներն անտեսել ենք: Կերտադրական անճշտություններին անդրադարձել ենք այն դեպքերում, երբ եղել են այլ սխալներին հարակից: Հարկ է, սակայն, նշել, որ դրանք բավական շատ են: Կա այս խնդրին առանձնակի ուշադրություն դարձնելու անհրաժեշտություն:

Ստորև ներկայացնում ենք նկատված սխալների օրինակներ:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

«Թե հատկապես ինչ այլ **խնդիրներ էր լուծվել** դրանով՝ բացի իրավիճակի կայունացումը, թերևս մնում է կռահել» («ՀԱՊԿ նախադեպն ու Ղազախստանի հրավերի «Ֆրանսիական» տողատակը», 23.01.2024), «Հայտնի է, որ դիտորդներ **կուղարկի ԵԱՀԿ** Խորհրդարանական վեհաժողովը, ԱՊՀ-ն, Թուրքիան, Իսլամական համագործակցության և Շանհայի համագործակցության կազմակերպությունը» («ԵԽԽՎ-ից՝ Ալիևին», 24.01.2024):

Երկու նախադասության մեջ էլ խախտված է ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնությունը:

Ըստ կանոնի՝ **խորհրդարանական վեհաժողովը** պետք է գրվի փոքրատառով: Ընդ որում՝ բերված հաջորդ օրինակում այդպես էլ գրված է:

Առաջին նախադասության մեջ կա նաև հոլովառության սխալ. **բացի** կապը պահանջում է, որ իրեն կապվող բառը լինի բացառական հոլովով:

Պետք էր գրել. «Թե հատկապես ինչ այլ **խնդիր էր լուծվել** դրանով՝ **բացի** իրավիճակի **կայունացումից**, թերևս մնում է կռահել» (կամ՝ «Թե հատկապես ինչ այլ **խնդիրներ էին լուծվել**»), «Հայտնի է, որ դիտորդներ **կուղարկեն ԵԱՀԿ խորհրդարանական**

վեհաժողովը, ԱՊՀ-ն, Թուրքիան, Իսլամական համագործակցության և Շանհայի համագործակցության կազմակերպությունը»:

«... հարցվածների 64,3%-ը կողմ էր, *որպեսզի Պիստորիուսը փոխարինի Շուլցին*» («Շուլցն ասել է, որ մտադիր չէ ...», 24.01.2024), «Մեկնաբանի ձևակերպմամբ՝ ռուսադրբեջանական ճանապարհային քարտեզը հնարավորություն է, *որպեսզի Բաքուն «չխոնարհվի Արևմուտքի առջև»*» («Ստրասբուրգյան դեմարշ՝ մոսկովյան ճանապարհային քարտեզի դիմաց», 25.01.2024), «... Մոսկվան ազատություն է տալիս, *որպեսզի ծագումով ադրբեջանցի մեծահարուստներն Ադրբեջանում ներդրումային խոշոր ծրագրեր իրականացնեն*» (նույն տեղում):

Որպեսզի շաղկապը գործածվում է այն դեպքում, երբ երկրորդական նախադասությունը նպատակի պարագա է: Բերված բոլոր օրինակներում հարկավոր էր գրել **որ**-ը, որն ունի «գործառույթների» ավելի լայն շրջանակ:

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐ

«Ֆրանսիայի նախագահ Մակրոնը ... *Պեղական այցով* ժամանել է Դելի» («Մակրոնի պատասխան այցը ...», 25.01.2024), «... *Պեղական այցով* Ֆրանսիայում էր Հնդկաստանի վարչապետ Մոդիին, որը *Պատրվավոր հյուր* էր ...» (նույն տեղում):

Ո՛չ **պեղական այց**-ը, ո՛չ **պատրվավոր հյուր**-ը մեծատառով գրելու անհրաժեշտություն չկա: Այն դեպքը չէ, երբ կարիք կա ցուցաբերելու հեղինակային վերաբերմունք:

«Ֆրանսիայի նախագահ Մակրոնը Հնդկաստանի վարչապետին պարգևատրել է Ֆրանսիայի պետական բարձրագույն պարգևով՝ Պատվո լեգեոնի *Օրդենի Մեծ* խաչով» (նույն տեղում):

Հայերենում պետություններից շնորհվող շքանշանների, մեդալների բաղադրյալ հատուկ անուններում մեծատառով գրվում է միայն առաջին բաղադրիչը:

Պետք էր գրել. «... պարզևատրել է Ֆրանսիայի պետական բարձրագույն պարզևո՞վ՝ Պատվո լեգեոնի **օրդենի մեծ** խաչով»:

«... հետախուզության ղեկավարը այց կատարեց Իրաք, հանդիպելով տեղի *ռազմա-քաղաքական* ղեկավարության հետ» («Ի՞նչ սպասել Թուրքիա-Իրան պայմանավորվածությունից», 25.01.2024):

Ռազմաքաղաքական բառը հարկավոր էր գրել առանց գծիկի:

Ըստ կանոնի՝ գծիկով գրվում են բառերի այնպիսի միացությունները, որոնք արտահայտում են տարբեր կողմերի հարաբերություններ (լեզուների, ժողովուրդների, պետությունների և այլն):

Կա նաև կետադրական անճշտություն: Քանի որ դերբայական դարձվածը հետադաս է, ստորակետի փոխարեն պետք էր դնել բուլթ:

ՍԽԱԼ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

«... *քննարկվել են հակաահաբեկչական միջոցառումներ*, որոնք Թուրքիայի մտահոգությունն են» («Հայաստանի ճանապարհները Ռայխսի-Էրդողան «սեղանին», 24.01.2024):

Քննարկվել կարող են ոչ թե միջոցառումները, այլ, օրինակ, դրանց վերաբերող հարցերը:

Նախադասությունը կարելի էր կազմել այսպես. «... **քննարկվել են հակաահաբեկչական միջոցառումներին վերաբերող (առնչվող) հարցեր**, որոնք»:

«Այս տարի ամերիկացիների 35%-ի հիմնական մտահոգությունը ներգաղթն է՝ նախորդ տարվա 27%-ի *փոխարեն*» («Թրամփը սպառնում է տապալել», 26.01.2024):

Այստեղ *փոխարեն*-ի հարց չկա: Նախադասությունը պետք էր կազմել ամբողջովին այլ կերպ և այլ տրամաբանությամբ: Օրինակ. «**Նախորդ տարի ներգաղթը ամերիկացիների 27%-ի հիմնական մտահոգությունն էր, այս տարի՝ 35%-ի**»:

ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՍԽԱԼՆԵՐ

«Հայաստանն ու ԱՄԷ-ն կխորացնեն գործակցությունն արևային էներգետիկայի արտադրության ոլորտում» (25.01.2024, վերնագիր):

Արտադրվում է ոչ թե էներգետիկան, այլ էներգիան:

Հարկավոր էր գրել. «Հայաստանն ու ԱՄԷ-ն կխորացնեն գործակցությունն արևային **էներգիայի** արտադրության ոլորտում»:

«Չինչին գյուղի բնակիչն ապօրինի ծառահատում է իրականացրել» (26.01.2024, վերնագիր):

Իրականացնել բառի գործածության չարաշահման դեմ Լեզվի կոմիտեն գրել է բազմիցս (տե՛ս, օրինակ, հորդորակը¹):

Այս բառը ևս իր հոմանիշների նկատմամբ ստացել է «գերիշխող» դիրք: Այլևս ոչինչ կարծես չի կատարվում, չի արվում, և ամեն բան միայն իրականացվում է: Չմոռանանք, որ *իրականացնել* նախ և առաջ նշանակում է «իրական դարձնել, իրականություն դարձնել, իրագործել»:

Տվյալ դեպքում կարելի էր գրել. «Չինչին գյուղի բնակիչն **ապօրինաբար հատել է ծառերը**»:

ՕՏԱՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

««Միլիտերի» փոխանցմամբ ... նա հայտարարել է» («Ո՞վ է «խանգարում» Էրդողանին», 29.01.2024):

Հաճախ անհարկի գործածվող բառերից է նաև *փոխանցել*-ը: Պատճառը թերևս օտար լեզուների ազդեցությունն է:

Սա ուղղակի պատճենում է օտար լեզվից: Հայերենն ունի սրան համարժեք կառույց: Տվյալ դեպքում փոխանցելու ոչինչ չկա:

Կարելի էր գրել, օրինակ. «Ըստ «Միլիտերի» **հրապարակման**», «Ըստ «Միլիտերի» **հաղորդման**»:

¹ Լեզվի կոմիտե. <http://www.langcom.am>, <http://tinyurl.com/522hz78x>

ՏԱՐԱԲՆՈՒՅԹ ԱՆՃՇՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մի քանի օր անց *կոնտրինգենտը* դուրս *բերվեց, ազդարարելով*, որ խնդիրները լուծվել են» («ՀԱՊԿ նախադեպն ու Ղազախստանի հրավերի «Ֆրանսիական» տողատակը», 23.01.2024):

Կոնտրինգենտ-ի հայերեն համարժեքները **քանակակազմ, հավաքակազմ** բառերն են: Հարկավոր էր գրել դրանցից որևէ մեկը:

Ինչպես ասվեց, հետադաս դերբայական դարձվածը տրոհվում է բույծով, ուստի *բերվեց* բառաձևի վրա պետք էր դնել բույծ:

Կա նաև քերականական անճշտություն: Նման դեպքերում, երբ նախադասության կազմում կա դերբայական դարձված, երկու բայերի, այսպես ասած, ենթական պետք է լինի նույն անձը: Այստեղ հավաքակազմը դուրս բերողներն ուրիշ են, ազդարարողները՝ ուրիշ:

Նախադասությունը կարելի էր կազմել այսպես. «Մի քանի օր անց **հավաքակազմը** դուրս **բերվեց և ազդարարվեց**, որ խնդիրները լուծվել են» կամ «Մի քանի օր անց **հավաքակազմը** դուրս **բերեցին՝ ազդարարելով**, որ խնդիրները լուծվել են»:

«Հայաստանում սակայն խորհրդարանը *ոչ միայն* շարունակում է կառավարման *հիերարխիայում* լինել առավելապես վարչական մի մարմին՝ գործադիր իշխանությանը ենթակա, ինչպես եղել է մինչև 2018 թվականը, *այլ* դրանից հետո նույնիսկ առավել «խորանալ» այդ տեղադիրքում» («ԱԳՆ դժգոհությունը խորհրդարանից», 31.01.2024):

Հայերենում կան զուգադիր շաղկապներ, որոնցից մեկն էլ «**ոչ միայն ... այլև**» զույգն է:

Հիերարխիա օտարաբանության փոխարեն նպատակահարմար էր գործածել **աստիճանակարգություն** կամ **ստորակարգություն** բառը:

Ճիշտ կլիներ *սակայն*-ը երկու կողմից տրոհել ստորակետով:

Նախադասությունը կարելի էր կազմել այսպես. «Հայաստանում, սակայն, խորհրդարանը **ոչ միայն** շարունակում է կառավարման **աստիճանակարգության մեջ** լինել առավելապես վարչական մի մարմին՝ գործադիր իշխանությանը ենթակա, ինչպես եղել է մինչև 2018 թվականը, **այլև** դրանից հետո նույնիսկ առավել «խորանալ» այդ տեղադիրքում»:

«Միացյալ Նահանգները ձգտում են Թուրքիային լիովին ներգրավել Ուկրաինային աջակցող կոալիցիայի՞ն, թե ավելի բարդ «պարտիա են մշակել»», «.... Միացյալ Նահանգները խոստանում են Էրդողանին 30 միլիարդ դոլար արտոնյալ վարկ տրամադրել» («Վաշինգտոն-Անկարա-Կիև. Ի՞նչ է «թելում» Նուլանդը», 01.02.2024):

Թեև Միացյալ Նահանգները քերականորեն հոգնակի է, սակայն իմաստային առումով եզակի է, մեկ պետություն է: Ստորագյալն այսպիսի դեպքերում պետք է լինի եզակի:

Ճիշտ չէ ներգրավել կոալիցիային ձևակերպումը:

Կա նաև կետադրական անճշտություն. «թե» շաղկապի վրա հարկավոր էր դնել հարցական նշան:

Պետք էր գրել. «Միացյալ Նահանգները ձգտում է Թուրքիային լիովին ներգրավել Ուկրաինային աջակցող կոալիցիա՞ (միավորման մե՞ջ), թե՞ ավելի բարդ «պարտիա է մշակել»», «.... Միացյալ Նահանգները խոստանում է»:

Վերնագրում *ի՞նչ* բառը հարկավոր էր գրել փոքրատառով:

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հարցն այն է, թե նոր փաստաթղթի ստորագրումը *ինչ* նոր աստիճան է ենթադրելու երկկողմ հարաբերության առումով, որը կարող է ստանալ *ռեզիոնալ* նշանակություն կամ համատեքստ» («*Ինչ* քարտեզ են ստորագրել Օվերչուկն ու Մուստաֆանը Բաքվում», 24.01.2024), «.... դա ներկայումս գերկարևոր խնդիր է միջազգային բոլոր դերակատարների համար, բոլոր *ռեզիոններում*, և այսօր հատկապես մերձա-

վորարևելյան *ռեզիոնում*, որի ըստ էության «ավազանային *ռեզիոն*» է նաև Կովկասը» («Ի՞նչ սպասել Թուրքիա-Իրան պայմանավորվածությունից», 25.01.2024):

Ռեզիոն բառի հայերեն համարժեքը վաղուց գործածվող **տարածաշրջան**-ն է: Առաջարկում ենք նախապատվություն տալ հայերեն բառերին:

Առաջին նախադասության *ինչ* դերանվան վրա պետք էր դնել շեշտ, վերնագրում՝ նույն դերանվան վրա՝ հարցական կամ շեշտ՝ կախված այն հանգամանքից, թե ի՞նչ է ցանկացել ասել հեղինակը:

Երկրորդ նախադասության մեջ *ռեզիոններում* բառաձևից հետո ստորակետ չպետք է դրվեր:

«*Ֆերմերները* պահանջում են ճանաչել իրենց մասնագիտության կարևորությունը և դատապարտել կառավարության գյուղատնտեսական քաղաքականությունը, *որն, ըստ* նրանց, *ֆերմերներին* դարձնում է անմրցունակ» («Ֆրանսիայում *ֆերմերներն* արգելափակել են բեռնատարների մուտքը դեպի Լա Մանշ», 24.01.2024):

Ֆերմեր-ը հայերեն **ագարակապեր**-ն է: Առաջարկում ենք այսուհետև գործածել այն:

Այստեղ նույնպես կա կետադրական անճշտություն:

Բառին ավելանում է *ն*, այլ ոչ *ը* հոդը միայն և միայն մեկ նպատակով. որպեսզի տվյալ բառը հաջորդի հետ արտասանվի սերտ, միասին: Բնական է, որ եթե այս երկու բառերի միջև լինի կետադրական նշան (օրինակ՝ ստորակետ), դրանք միասին չեն արտասանվի: Այս առումով տրամաբանական չէ, երբ ձայնավորով սկսվող բառին նախորդող բառն ստանում է *ն* հոդը, ինչպես բերված օրինակում է:

Տրամաբանական կլիներ գրել. «.... **որը, ըստ** նրանց»:

«Այս դեպքում, կարծես, ավելի *ակտուալ* է հարցադրում *անել*. «Իսկ Թուրքիան տարածաշրջանային դերակատար չէ՞» («Ո՞վ է «խանգարում» Էրդողանին», 29.01.2024):

Ակտուալ բառի փոխարեն կարելի էր գործածել **հրապրապ** բառը:

Կա նաև քերականական անճշտություն:

Ճիշտ կլիներ գրել. «Այս դեպքում, կարծես, ավելի **հրապապ** է հարցադրում **անելը**»:

*Լեզվական վերահսկողության բաժնի
գլխավոր մասնագետ՝ Գուրգեն Միքայելյան*